## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 29 >> հուլիսի 2016թ.　　　　　　　　　　N 66

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Լիլիթ Գասպարյանի 2016 թվականի հուլիսի 25-ի դիմումը.

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Լիլիթ Գասպարյանին տրամադրել 2015-2016 աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը 2016 թվականի օգոստոսի 8-ից սեպտեմբերի 8-ը ներառյալ՝ 24 (20 նվազագույն և 4 լրացուցիչ )աշխատանքային օր տևողությամբ:
2. Լիլիթ Գասպարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Կարինե Խաչիկյանին:
3. Լիլիթ Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի սեպտեմբերի 9-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016 թվականի օգոստոսի 5-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝　　　　　　　　　　Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ